DOI: 10.54503/1829-4324.2024.1-226

4. ՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՃԵՂՔՎԱԾՔՆԵՐԸ

Ռոբերտ Ներսեսի Սարինյան

Հոդվածը ստացվել է՝ 14.02.24, ուղարկվել է գրախոսման՝ 20.03.24, երաշխավորվել է տպագրության՝ 06.06.24

XIX դարի 70-90-ական թվականների հայ հասարակական մտքի ազատամտական, ազգային պահպանողական և նարոդնիկական հոսանքների հայեցության մեջ՝ դրանց միացնող ու բաժանող տիրույթներում որոշակիորեն առանձնանում էին տնտեսական մտածողության ուղղությունները, որոնք XX դարասկզբին «ավարտում են իրենց պատմական դերը»՝ ձև տալով մի մտածողության, որում ցրված ձևով առկա էին ամենատարբեր տնտեսագիտական ուղղությունների նստվածքները։

* *
*

Խորհրդային երկրի (որի մի մասն էր Հայաստանը) պատմության 20-ական թվականները դեռևս «գրականության ազատության» ժամանակաշրջանն էր, չկային արգելված հեղինակներ, հասարակական միտքն ազատ հնարավորություն ուներ շփվելու արևմտյան տնտեսագիտական մտքի ձեռքբերումներին։ Ի հայտ եկան աշխատություններ, որոնք տնտեսագիտական միտքը դիմորոշեցին դեպի գիտական նորարարությունները։ Այսպես, Բազարովը մշակեց տնտեսական աճի մաթեմատիկական տեսությունը, իսկ Կոնդրատևը կատարեց տնտեսական աճի երկար ու կարճ «ալիքների» վիճակագրական վերլուծություններ, որոնք ներգործական նշանակություն ունեցան արևմտյան մտքի հետագա զարգացման վրա, որից հետո, ինչպես նկատում է ամերիկյան տնտեսագետ Վասիլի Լեոնտևը, «Սովետական Ռուսաստանում սկսվում է տնտեսական գիտության անկումը»։ Տնտեսագիտական միտքը կծկվում է, իր մեթոդաբանությամբ ենթակա մարքսիստական դոկտրինայի միագիծ ուղղվածությանը, հետազոտության առարկա դարձնելով հարցեր, կատեգորիաներ, երևույթներ՝ որոնցից արևմտյան միտքն արդեն հրաժարվել էր կամ համարում էր լուծված։ Տնտեսագիտական միտքը կուսակցականացված էր, բացառելով երևույթների վերլուծության այլ մեթոդների հետազոտական փորձը։ Եվ այդպես տասնամյակներ շարունակ։ Այդ էր ազդարարում «История политической экономии социализма» (М., 1972) աշխատությունը, թե «կուսակցության սկզբունքը հիմնարար նշանակություն ունի սոցիալիզմի քաղաքատնտեսության պատմության մշակման ժամանակ»[1]։ Այդ է վկայում, որ 1930-80-ական թվականներին հրատարակված տնտեսագիտության

[1] Տես՝ նշվ. աշխ.-ը, էջ 7։

ձեռնարկներն ու դասագրքերն իրենց հարցադրումներով ու պատասխաններով գրեթե չէին տարբերվում: Հեղինակային կոլեկտիվները, որքան էլ փորձել էին հաղթահարել այն արհեստական իրավիճակը, որ ստեղծվել էր առարկայում՝ խոսքը կապիտալիզմի և սոցիալիզմի քաղաքատնտեսության գոյության մասին է, «վերաիմաստավորումները» մնացել էին նույն կաղապարների սահմանագծերում: Ինչպես նկատում է Ս. Սարինյան, «Հասարակագիտական ու պատմ փիլիսոփայական կատեգորիաները թվաբանական ճշտությամբ գործում են ամենուրեք... որոնց տեսական բանաձևերի նույնիսկ ենթակա չէին կոմենտարիաների կամ տարբերակված մեկնության: Իր միակ ուժը քննադատությունն է՝ քննադատություն բոլոր տեսությունների ու ուսմունքների, բացասումն այն ամենի, ինչ հակասում է մարքսիզմ-լենինիզմի այբուբենին»[1]:

Հասարակական կյանքը նոր լուծումներ էր ենթադրում, իսկ դրանց պատասխանները փնտրել մեկ, մեկուկես դար առաջ գրված աշխատություններում ժամանակավրեպ զբաղմունք էր: Գիտական, հատկապես կուլիսային մակարդակով տարակուսանք էին հարուցում այն անիմաստ բանավեճերը, որոնք ժամանակ առ ժամանակ զբաղեցնում էին տնտեսագետներին: Սակայն իրականացվող ռեֆորմները դիմառնում էին վերուստ սահմանված տեսության քառակուսուն, նոր բան չգրանցելով դրանցում: Խոսքը վերաբերում է արտադրողական ուժեր և արտադրական հարաբերություններ, ապրանք, արժեք, փող, գին, շահույթ, պահանջարկ և առաջարկ և բազում այլ կատեգորիաների կամ հնարովի տնտեսական օրենքների մասին բանավեճերին, որոնք, ինչպես հաճախ նշվում էր այդպիսի դեպքերում, որպես թե սոցիալիզմի պայմաններում ձեռք են բերում «նոր բովանդակություն»[2]: Հաճախ, այս կամ այն դրույթը հիմնավորվում էր Կ. Մարքսից կամ Վ. Լենինից բերված որևէ ցիտատով, այնուհետև դա լրացվում մեկ ուրիշով և այդպես շարունակ: Բանը նրանում չէ, որ վկայակոչումներ էին կատարվում Մարքսից և հազիվ թե գտնվի մեկը, որ նրան չդասի համաշխարհային տնտեսագիտական մտքի ընտրյալների շարքում: Մինչդեռ հայտնի է անցած ժամանակաշրջանում արևմտյան տնտեսագիտական դպրոցների հաջորդափոխության հետագիծը, ամեն մեկը բերելով որոշակի վերլուծական մեթոդոլոգիա, նոր հասկացություններ, տնտեսական կյանքը ենթարկելով նոր չափումների, տնտեսական մտածողության նոր մշակույթի: Պատահական չէ, որ վերը նշված կատեգորիաները նոր իրադրության պայմաններում հայտնվեցին տեսության լուսանցքում, օտարվելով վերլուծական բառապաշարից, դուրս մնալով նոր շարժման ընթացքի պիտանիության անհրաժեշտությունից: Խորհրդային տարիներին հրատարակվել են արևմտյան տնտեսագետների ոչ քիչ թվով աշխատություններ, որոնց վրա անպայմանորեն նշված էր «գիտական աշխատողների համար»: Իսկ գիտական միտքը լավագույն դեպքում «ծաղկաքաղ» էր անում այս

[1] Սերգեյ Սարինյան, Հայ գաղափարաբանություն. Պատմաքննական տեսություն, Եր. 1998, էջ 159:
[2] Политическая экономия, учебное пособие, М., 1988, с.321.

կամ այն հատվածը, մտքերը կտրում ենթատեքստից քննադատության համար։ Ավելին՝ քչերն էին ծանոթ այդ աշխատություններին։ Դրանցում, հաճախ երևույթները համեմվում էին պատկերների, բառերի, համեմատությունների մեկնություններով, որոնք շփումներ էին որոնում մտածողության այլ ոլորտների՝ գրականության, պատմության, փիլիսոփայության, հոգեբանության, բնական գիտությունների հետ (ի դեպ ինչը բնորոշ էր Կ.Մարքսի վերլուծական մտքին)։ Այսինքն, տնտեսական մարդը դիտարկվում էր ոչ միայն որպես արտադրող էակ, այլ իր բոլոր չափումների մեջ, որպես ամբողջական մարդ՝ իր սոցիալական անդրադարձումներում*։ Այլապես վերանում է ամբողջական մարդը, կծկվում է նրա վերլուծական սահմանը և մարդը վերածվում է հասարակական ֆունկցիայի։

Մարիետա Շահինյանը չեխ կոմպոզիտոր Իոզեֆ Միսլևիչեկին նվիրված աշխատությունը սկսում է հետևյալ խոսքերով. «Մարդիկ ստեղծված են այնպես, որ նրանց աչքերը տեղադրված են միայն առջևից։ Ասում են մեղուները բազմաթիվ աչքեր ունեն և նրանք կարող են միանգամից նայել բոլոր կողմերը։ Մարդը կարող է միայն ու միայն դեպի առաջ նայել, եթե նա նույնիսկ դեպի ետ շրջվի, նա ետ է նայում որպես առաջ»[1]։

Արևմտյան տնտեսագիտական մտքի նվաճումներից կտրված խորհրդային տնտեսագիտությունը մնում էր նույն բառապաշարի և ձևակերպումների շրջանակներում։

Առարկայի նորացումը ենթադրում է ինչպես դրույթների, այնպես էլ տերմինոլոգիայի փոփոխություն։ Հնարավոր չէ XIX դարից եկող հասկացություններով իմաստավորել տնտեսական կյանքի նորագույն փոփոխությունը-

---

* Այս իմաստով ուշագրավ է ներկայանում դեռևս 1986-ին «Наш современник» ամսագրի №7-ում տպագրված Միխայիլ Անտոնովի «Ускорения:возможности и преграды» հոդվածը, որում սոցիալիզմի քաղաքատնտեսության հրատարակվող դասագրքերում առաջադրվող դրույթները համարվում է դեկլարատիվ և իրականությունից կտրված, որոնցում ըստ էության «բացակայում է մարդը», թե՝ դա ինչ գիտություն է, երբ «կուսակցության մեկ որոշումով ամեն ինչ փոխվում է»։ Դրական տեղաշարժեր սկսեցին նկատվել 1960-ական թվականների սկզբներին, երբ որոշակի էր դարձել տնտեսագիտության տեսության դեպի մարդը շրջվելու անհրաժեշտությունը։ Սակայն, ավանդական մեթոդները, որոնք իրենց հիմքում ունեին c+v+m կոմբինացիան, չէին կարող դա անել։ Կենդանի, ամբողջական մարդու տեսական ու պատմական վերլուծությունները չէին տեղադրվում արմատացած դոկտրինայում, ծայրահեղորեն նկատելով, թե խնդիրը «այնքան անսովոր ու սարսափելի էր», որ տնտեսագետների մի մասը ինչ-որ ձևով որպես թե «հուսահատության ժեստ», «շրջանցող ուղի» առաջարկել էր փորձարկել՝ մաթեմատիկական մեթոդների կիրառումը։ Սա ծայրահեղ մոտեցում է և չի կարելի անտեսել նաև դրական տեղաշարժերը, կապված միութենական խոշոր գիտահետազոտական կենտրոնների կողմից պլանավորման տեսության և պրակտիկայի, տնտեսական պլանների օպտիմալացման, տնտեսական ռեսուրսների տեղաբաշխման և այլ ուղղություններով՝ որպես պայմանական առումով դպրոցների, չնայած առկա սահմանափակումներին։ Սովորաբար դասագրքերն արտացոլում են առարկայի պատկերը։ Իսկ այս առումով 1980-ական թվականներին հրատարակված դասագրքերում տեսության նշաձողերը մնում էին գրեթե նույն մակարդակի վրա։

[1] Мариэтта Шагинян: Иозеф Мыслевичек, М., 1988, с.7.

ները։ Ինչպես օրինակ արտադրողական ուժեր և արտադրական հարաբերություններ հասկացություններն են, չխոսելով դրանց համապատասխանության օրենքի մասին։ Առաջինը չի արտահայտում տնտեսական ռեսուրսների, իսկ երկրորդը՝ տնտեսական հարաբերությունների համակարգերն իրենց ամբողջության մեջ։ Ավելին՝ դրանում գործում էր այն մտակառույցը, ըստ որի արտադրությունը հանդիսանում է ելակետային և բնորոշիչ տնտեսական հարաբերությունների ամբողջ համակարգի համար, իսկ աշխատանքը՝ արտադրողական և ոչ արտադրողական։ Մինչդեռ տնտեսագիտական միտքը վաղուց արդեն վիճարկում էր Ադամ Սմիթից եկող այդ հայեցությունը։ Դեռևս XIX դարասկզբին Սիսմոնդու «Քաղաքատնտեսությունը ոչ թե պարզ հաշվի գիտություն է, այլ բարոյագիտություն»[1] կոնցեպցիան ազդակ հանդիսացավ տնտեսագիտական մտքի հետագա նոր արծարծումների և «սոցիալ-էթիկական» տարբեր ուղղությունների համար ուղղված «տնտեսական մարդու» հասարակական կացության շառավիղների ընդլայնմանը։ Իսկ Ֆրիդրիխ Լիստը «Քրիստոնեական կրոնը, միամուսնության ժառանգումը, գրատպության, մամուլի փոստի, փողի, քաշի և չափի, օրացույցի և ժամացույցի հայտնագործումը, ոստիկանությունը, ազատ հողասեփականությունն ու տրանսպորտային միջոցները» համարում էր արտադրողական ուժերի հարուստ աղբյուրներ[2]։

Սմիթը արտադրողական է դիտում այն աշխատանքը, որը զբաղված է նյութական արտադրության ոլորտում՝ անտեսելով ազգի «ինտելեկտուալ և սոցիալական ուժերը»։ Ըստ այդ տրամաբանության «ով դաստիարակում է խոզերին, հասարակության արտադրողական անդամ է, իսկ ով դաստիարակում է մարդկանց՝ ոչ արտադրողական»[3]։ Ոչ արտադրողական աշխատանքի Սմիթի դոկտրինան հաճախ դիտվում է որպես «տնտեսագիտական մտքի պատմության ամենակործանարար կոնցեպցիաներից մեկը», որը Կ. Մարքսի կողմից ստացավ նոր լիցք։ XX դարում, այն երկրներում, որտեղ տիրապետող էր մարքսիստական հայեցությունը, ազգային եկամտի հաշվարկման հիմքում այն շարունակում էր մնալ որպես մեթոդոլոգիական ուղեցույց[4]։ Որպես թե բոլոր եկամուտներն ունեն մեկ ընդհանուր աղբյուր՝ արտադրության մեջ ստեղծված հավելյալ արժեքը։

Տնտեսական կյանքը բազմաթիվ կախվածությունների շղթա է, որտեղ կարևոր տեղ է հատկացվում տնտեսական մշակույթի տիրույթին, որը ենթադրում է տնտեսության և հոգևոր կյանքի կապը, իսկ ավելի ստույգ, հոգևոր կյանքի ազդեցությունը տնտեսության վրա։ Կուրնոն ասում է, թե «որևէ տնտեսական պրոբլեմի տարբեր տեսանկյունների ուսումնասիրության ժամանակ, խնդիրն այն չէ, որ պատճառակցական կապերի շղթայում դրանք դիտարկվեն որպես հաջորդաբար իրար դետերմինավորողներ՝ Ա-ն որոշում է Բ-ն, Բ-ն որոշում է Գ-ն

---

[1] Ж.Симонд де Сисмонди, Новое начала политической экономии, т.1, М., 1937, с. 291.

[2] Лист Фридрих, Национальная система политической экономии, СПб., 1891, с. 189.

[3] Лист Фридрих, նշվ. աշխ. էջ 187։

[4] Студенский П, Доход нации. Теория измерение и анализ: прошлое и настоящее, М., 1968, с. 20-25.

և այլն, այլ այն, որ տեսնեն բոլոր փոխադարձ փոխներգործությունները միմյանց վրա»[1]: Թերևս, դրանում պիտի տեսնել խորհրդային տնտեսագիտության ճեղքվածքներից մեկը: Վերլուծական մտքի շարժումն ուներ միակողմանի բնույթ՝ տնտեսականից դեպի մյուսները, անտեսելով հակառակը՝ մշակույթի ազդեցությունը տնտեսականի վրա: Ռուս հայտնի մտածող Դմիտրի Լիխաչյովը 1990-ականների վերջերին իր ելույթներից մեկում նկատում է. «70 տարի մեզ դաստիարակել են հոռետեսության, չէ՞ որ մարքսիզմը դա ամենամոլի հոռետեսական ուսմունքներից մեկն է: Նյութը գերիշխում էր ոգուն, հոգևորի վրա, միայն այդ դրույթն ասում է այն մասին, որ նյութը, այսինքն՝ ցածրադիր սկիզբն առաջնային է»[2]:

Դեռևս անցյալ դարասկզբին Միքայել Վարանդյանը, նշելով այն ճեղքվածքը, որ առկա էր մարքսիզմի դոկտրինայում, նկատում է, որ եթե Հեգելի փիլիսոփայությունը նախընտրում էր ոգու դիալեկտիկան, ապա Կ.Մարքսի ուսմունքի խարիսխը, որի վրա կառուցվում է հասարակական հարաբերությունների ողջ համակարգը, ենթադրում է տնտեսական գործոնը: Անտարակույս է Մարքսի պատկառելի ծառայությունը հասարակական գործընթացները նյութական կամ տնտեսական ուժերի կարևորությամբ բացատրելու հարցում, հանգամանք, որին քիչ ուշադրություն է դարձվել սոցիոլոգիական մտքի պատմության մեջ, սակայն վերլուծության սլաքն ամբողջությամբ ուղղել դեպի տնտեսական կետը, նշանակում է «պատմական վերիվայրումներին» տալ միագիծ գնահատումներ՝ մի կողմ թողնելով հոգևոր ու գաղափարական ազդակների նշանակությունը, «լուսաբանել մարդկային պատմության բովանդակ ընթացքը, նրա բոլոր կնճիռները»[3]:

Անհրաժեշտություն չեմ տեսնում անդրադառնալ մշակույթի տնտեսության վրա ունեցած ազդեցության, մարդու պահվածքի «ճանաչելիության», և «անճանաչելիության», «ռացիոնալի ու իռացիոնալի» ազդակների նախորդ և արդի տեսություններին, որոնք ընդլայնում են խնդրի սահմանները: Իսկ իրողությունն այն է, որ մշակույթի և տնտեսության կապի վերաբերյալ առաջին ուսումնասիրությունները խորհրդային տնտեսագետների ուշադրությանը սկսել են արժանանալ միայն 1980-ական թվականների վերջերին: 1989-թ. «ЭКО» ամսագրում (որի խմբագիրն էր Ա.Աղանբեկյանը) տպագրվում է Ռ.Ռիվկինայի «Экономическая культура как память общества» բնորոշ վերնագրով հոդվածը: Հոդվածի հարցադրումը՝ « մշակույթ և տնտեսություն կապ կա՞», արդեն իսկ վկայում է տնտեսագիտական մտքի առանձնահատկության մասին, որն անտեսում էր մշակույթի գործոնների տնտեսության վրա պատճառական կապը: Եվ միանգա-

---

[1] Маршал А. Принципы политической экономии, т. 1, М., 1983, с. 49.

[2] Д.С.Лихачев, Униварситетские встречи, 16 текстов, СПб, СПбГУП, 2006, с. 69.

[3] Վարանդյան Մ., Հոսանքներ, ԺՆև, 1910, էջ 23-24 (Ի դեպ Ֆ.Էնգելսի մոտ կարելի է հանդիպել գաղափարական բնագավառի ինքնազարգացման, տնտեսական գործոնից անկախ ինքնուրույն զարգացման ներքին ուժի առկայության վերաբերյալ դատողությունների (Маркс К., Энгельс Ф., Произв., в 3-х томах, т. 3: М., 1983, с. 545-5499): Եվ իր իսկ խոստովանությամբ «Մարքսը և ես, մասամբ մեղավոր ենք այն բանում, որ երիտասարդությունը, երբեմն, տնտեսական կողմին ավելի մեծ ուշադրություն է տալիս...» (նույն տեղում, էջ 548)):

մայն արդիական էր հնչում հեղինակի այն պահանջը, թե «Անհրաժեշտ է դիտարկել տնտեսության վրա մշակույթի ազդեցության մեխանիզմը: Ազդեցությունը կատարվում է տնտեսական հաստատությունների գործունեությունը կարգավորող արժեքների ու սոցիալական նորմերի՝ պլանավորման, մատակարարման, շուկայի, ֆինանսների, հասարակության տարբեր խմբերի պահվածքի ու նրանց վիճակի միջոցով»: Տնտեսության զարգացումը կարգավորող «մշակույթի միավորները» ձևավորվում են նաև տնտեսությունից դուրս՝ բարոյականության, կրոնի, քաղաքականութան, գաղափարախոսության, իրավունքի ոլորտներում: Այստեղ մշակվող գիտակցությունն ու պահվածքը հետագայում ձուլվում են տնտեսությանը, մարմնավորվում դրանում ու դառնում տնտեսական մշակույթի մի մասը, որը կարելի է նմանեցնել հասարակության մշակույթի լայն գետից դուրս եկող առաջարկին: Օրինակ՝ «պատիվ», ու «խիղճ» հասկացություններն իբրև այդպիսիք, չունեն տնտեսագիտական բնույթ, պատկանում են բարոյականության ոլորտին, բայց այդ բարոյական հատկանիշները կարգավորում են նաև տնտեսությունը[1]:

Տասնամյակներ շարունակ հրապարակվող աշխատություններում արծարծվում են տնտեսական աճի, ներդրումների, ինֆլյացիայի, աշխատաշուկայի, հարկային համակարգի, տնտեսական ազատության, մրցունակության, ինստիտուցիոնալ բարեփոխումների և բազմաթիվ այլ հարցեր, դրանք հաստատելով ամենատարբեր տեսություններից ու մտածողներից բերվող դրույթներով: Իսկ «Ինչու Ռուսաստանում, չնայած արդեն քառորդ դար կիրառվող արևմտյան ամենատարբեր տնտեսագիտական տեսությունների կիրառմանը»,- նկատում է Է.Ն.Կրյուչևսկին,- սկսած մոնետարիզմից ու ինդիվիդուալիզմից մինչև քեյնսականություն և ինստիտուցիոնալիզմ, չի հաջողվում կառուցել էֆեկտիվ տնտեսություն: Պատասխանը միանգամայն ակնհայտ է, բոլոր այդ տնտեսագիտական հայացքներում այս կամ այն չափով հաշվի չեն առնվում տնտեսական գործողությունների գլխավոր գործոնին՝ մարդուն, նրա մտախառնվածքը: Հեշտ է հիմք ընդունել homo economicus-ի մեխանիկական մտահայեցողության մոդելը, իսկ հետո էլ իր հայեցությամբ ընտրել «խելացի մեքենայի» պահանջմունքներն ակտիվացնող միջոցառումներ: Միայն քչերն են հասկանում, որ տնտեսությունը ոչ թե ֆիզիոկրատական գիտություն է, ոչ թե «սոցիալական մաթեմատիկայի», տարբերակ է, որում մաթեմատիկական ճշգրտությունն ամեն ինչ է, այլ էմպիրիկ ռելևանտություն՝ ոչինչ», այլ սոցիումի տնտեսական փոխազդեցության մասին գիտելիքների համակարգ: Հետևապես, անհատների շատ գործողություններ կապված են ոչ այնքան ցանկությունների ուտիլիտար բավարարման, որքան՝ գաղափարախոսության, կրոնի, էթիկայի, հոգեբանության, ազգային բնավորության առանձնահատկությունների հետ»[2]: Նա իր դիտողությունները ձևում է

[1] Տես՝ «ЭКО», 1989, №1, էջ 22:

[2] Никита Кричевский, Наследие противоречий. Истоки русского экономического характера, М., 2016, с. 6.

Ռուսաստանի պատմության, նրանում տիրող հաստատությունների կոնկրետ առանձնահատկությունների փաստարկների վրա:

Խորհրդային տնտեսագիտական մտքի կտրվածությունը* նորագույն տեսություններից այն ճեղքվածքներից էր, որն իր ազդեցությունը պիտի ունենար շուկայական տնտեսությանն անցնելու առումով: Այն, որ արևմտյան երկրների ժամանակակից հասկացությամբ շուկայական տնտեսություն կարելի է կառուցել մի քանի սերունդների կյանքի ընթացքում, քչերն էին հասկանում: «Արևմուտքում,- նկատում է Վ. Դանիլով-Դանիելյանը,-շուկան ձևավորվել է հարյուրամյակների ընթացքում, այն դարձել է հասարակության մշակույթի տարր՝ զարգանալով համապատասխան սոցիալական միջավայրում, և, իհարկե ներգործելով այդ միջավայրի էվոլյուցիայի վրա: Ուրեմն, եթե շուկան մշակույթի տարր է, ապա դա և՛ պատմություն է, և՛ ավանդույթ, և՛ արարողություն, գրված ու չգրված օրենքներ: Այդ ամենը ոչ միայն երկու տարում, այլև երկու հնգամյակում չի կարելի ձևավորել»[1]:

Խորհրդային տնտեսագետների անգիտությամբ պիտի բացատրել այն ռոմանտիկական պատրանքները, թե անհրաժեշտ է կատարել այս կամ այն փոփոխությունը, շուկայական սկզբունքները 200, 400 կամ 500 օրվա ընթացքում խցկել և ամեն ինչ կլինի Արևմուտքի նման: Մինչդեռ « մեզ մոտ, - նկատում է Դ. Լվովը,- չկային մակրոէկոնոմիկայի, կապիտալի և աշխատանքի, միջազգային ֆինանսներին տիրապետող տեսաբան մասնագետներ, արտադրական կազմակերպությունների տեսության մասնագետներ և այլն: Չկային պրոֆեսիոնալներ, որոնք կարող էին հավասարը հավասարի հետ պաշտպանեին Ռուսաստանի շահերը համաշխարհային բանկում կամ միջազգային վալյուտային ֆոնդում: Երիտասարդ մարդիկ, որոնք լիազորված էին այդ նպատակների համար, լավագույն դեպքում եղել են ունակ աշակերտներ: Ռուսաստանի առանձնահատկությունները լավ իմացող խորհրդատուներին փոխարինեցին մակրոկառավարման արևմտյան մասնագետներ, ենթադրելով թե տնօրինում են ռեֆորմների իրականացման ունիվերսալ դեղատոմսերի: Սակայն, նրանք բացարձակապես չէին պատկերացնում ռուսական տնտեսության առանձնահատկությունները»[2]:

Առիթի բերումով հարկ եմ համարում անդրադառնալ մի այլ առանձնահատկության: Դավիթ Անանունը ազգության «ներքին ու արտաքին» խորհուրդը համարում է տնտեսական խնդիրը, որի համար անհրաժեշտ է ստեղծել ընդհանուր տարածքային պատվանդան, որպես «ազգային բարոյական կապն

---

* Այդ էր շեշտում Վ.Պոլտերևիչը «Кризис экономической теории» բնորոշ վերնագրով հոդվածում (տես՝ Экономичес-кая наука в современной Росии,1998, №11): Հեղինակը հարցը դիտում է գլոբալ իմաստով, շեշտելով տնտեագիտության մեջ առկա ճեղքվածքները: Իսկ իրողությունն այն է, որ վերջին ութսուն տարիների ընթացքում տնտեսագիտական տեխնոլոգիաներով հետազոտությունների ճեղքվածքն արևմուտքի և Ռուսաստանի միջև մեծացել է (էջ 64):

[1] Տես՝ «Новый мир», 1990, №5 с. 193.

[2] Տես՝ Экономичемкая наука современной России, 1999, №2,, с.10.

ամրացնող գործոնի, որից դուրս մնացած հատվածներն իրենց «նյութական զորությամբ» անմասն են մնում ազգի կյանքին»[1]: Այն ինչ կատարվեց XX դարում Արցախի, Նախիջևանի և Արևմտյան Հայաստանի հետ, որպես «հավաքական հայրենիքի բաղադրիչների»: Եվ այսպես, 1920թ. Հայաստանի արևելյան հատվածում հաստատվում են խորհրդային կարգեր՝ որպես խորհրդային երկրի մաս: Ամբողջ միութենական տնտեսությունը դիտվում էր որպես մի միասնական տնտեսական համակարգ: Անհրաժեշտություն չկա անդրադառնալու ժամանակը, տնտեսական, սոցիալական, քաղաքական համակարգը, հասարակական կառուցվածքները կաշկանդող կապանքներին, տնտեսական վերափոխումների տարբեր աստիճաններում իրականացվող մեթոդներին ու միջոցներին: Երկրամասի վարչական բաժանումն իրականացվեց տվյալ ազգային տերիտորիայում «փոքրամասնություն ընդունելով» և «փոքրամասնություն թողնելու» սկզբունքով: Իսկ նման օրինակները խորհրդային երկրում շատ էին, որն ուներ քաղաքական ենթիմաստ, տարածքային կտրտվածություններն ու կախվածությունները, որպես լծակ զսպելու կենտրոնախույս տրամադրությունները: Եվ, ոչ պատահականորեն խորհրդային հասարակական մտայնության ընդհանուր բառապաշարում բացակայում է «ազգային տնտեսություն» հասկացողությունը, հետևապես նաև ազգային տնտեսական քաղաքականությունը: Ինքնին հասկանալի է՝ նաև ազգային տնտեսական գաղափարախոսությունը: Ազգային տնտեսությունների առանձնահատկություններով էր պայմանավորված ԽՍՀՄ ամբողջ տնտեսությունը բեռնաշրջանառության վրա կառուցելու պաթոլոգիական սկզբունքը (վերջինիս ծավալը երեք անգամ գերազանցում էր ԱՄՆ-ի մակարդակը, այն դեպքում, երբ արտադրության ծավալով կազմում էր նրա 60-70 տոկոսը), ուր բացակայում էր հանրապետության նյութական ու հոգևոր արտադրությունների ու ծառայությունների համալիր օգտագործման հանգամանքը: Այսինքն՝ անտեսված էր «ազգի տնտեսական հարաբերական անկախությունը և գոյատևությունն ապահովող խնդիրները լուծող տնտեսության ստեղծումը»:

Խորհրդային տնտեսական մեխանիզմի առավելությունները բնութագրող հասկացություններից էր համարվում կենտրոնացված պլանավորման վերաբերյալ վարկածը, որ որպես թե ենթադրում է տնտեսության գիտակցական կազմակերպում, արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների համապատասխանություն, պետության կենտրոնացված պլանավորման և տնտեսական օղակների ինքնուրույնության զուգորդում, առկա ռեսուրսների ռացիոնալ օգտագործում և հասարակության անդամների լրիվ բավարարում և այլն: Իսկ այս վերջին առումով «դեֆիցիտը» դարձել էր հասարակության մշտական ուղեկիցը: Ռուս հայտնի գրող Անատոլի Զլոբինը սոցիալիստական պլանային տնտեսության բարոյական համակարգը բնութագրում է այսպիսի մի պատկերավոր

[1] Դ.Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1800-1870), հ.2, Էջմիածին, 1922, էջ 240:

պատմությամբ. Մի թագավորությունում, մի երկրում արտադրում էին բեռնատար մեքենաներ՝ կարտոֆիլ և հրթիռներ տեղափոխելու համար։ Դրանք հրթիռների համար հերիքում էր, իսկ կարտոֆիլի համար՝ ոչ։ Զեկուցում են նախարարին։ Նա գալիս է գործարան՝ թե տվեք մեզ պլանից ավել 100 բեռնատար մեքենա, փոխարենը մենք ձեզ կբերենք կարտոֆիլ։ Գործարանում՝ թե մեզ տվեք 100 լրացուցիչ զսպակներ և մենք կտանք 100 լրացուցիչ մեքենա։ Նախարարը դիմում է մեքենաշինարարներին, թե մեզ պլանից ավելի զսպակներ են պետք, որպեսզի մեքենաներ արտադրեն կարտոֆիլ տեղափոխելու համար։ Վերջիններս, թե կարող եք տալ անհրաժեշտ զսպակները, բայց դրա համար մեզ անհրաժեշտ է լրացուցիչ գլանվածք։ Նախարարը շտապում է գլանվածք արտադրողների մոտ, թե անհրաժեշտ է այսքան գերպլանային գլանվածք, որպեսզի զսպակներ պատրաստեն, մեքենաներ արտադրեն և կարտոֆիլը տեղափոխեն։ Սրան, թե այդքան լրացուցիչ գլանվածքի համար պահանջվում է այսքան լրացուցիչ մետաղ, որի համար դիմում է մետաղագործներին… իսկ այնուհետև լեռնագործներին, թե այսքան լրացուցիչ հանքաքար է անհրաժեշտ, որպեսզի…։ Սրանք, թե ամեն ինչ կանենք, միայն թե հանքաքարը տեղափոխելու համար տրանսպորտային միջոցները չեն բավականացնում, մեզ անհրաժեշտ է լրացուցիչ 100 բեռնատար մեքենաներ։ Նախարարը շտապում է մեքենաշինական գործարան...։ Եվ այսպես շղթան նորից է սկսվում։

Սակայն գոյություն ուներ պլանային համակարգին բնորոշ մի մեծ հայտնագործություն՝ պլանների ճշգրտման պրակտիկան։ Տարեվերջին բեռնատար մեքենաների արտադրության պլանը 100-ից իջեցվում է 90-ի և պլանները գերակատարվում են[1]։

Մինչև 1960-ական թվականները, նույնիսկ տեսական կտրվածքով, տնտեսական միտքը չի քննարկել վարչարարական համակարգը կամ տնտեսական զարգացման ուղիները փոխելու վերաբերյալ հարցերը։ Իսկ 60-ական թվականներից հետո սկիզբ է առնում կիսատ մնացած ռեֆորմների ժամանակաշրջանը, որտեղ կառավարման տնտեսական միջոցների արմատավորման ճիգերը մնացին որպես պալլիատիվ ցանկություններ, քանի որ «տնտհաշվարկային, ապրանքադրամական հարաբերությունները, ընդունվեցին լոկ որպես վարչարակական պլանավորման լրացումներ»[2]։ Խորհրդային յոթ տասնամյակների ժամանակահատվածում և՛ տեսությունը, և՛ տնտեսական կառուցվածքները մի ամբողջության մեջ գործող համակարգ էր, ուր ամեն մի կիսատ մնացած ռեֆորմ ենթադրում էր ոչ թե սահմանազատում հնից, այլ պարզապես նորից վերադարձ նույն համակարգին։ Եվ, քանի որ սոցիալիստական տնտեսակարգը հենց սկզբից կորցրել էր ավանդները ժառանգելու բնականոն ուղու սկզբունքները, ուստի,

[1] Новый мир, 1987, №3 с. 218-219.

[2] Конотопов М.В, Сметанин С.И., История экономики, М., 2000, с.17.

սահմանազատումը պիտի կատարվեր ոչ թե նոր ուղիների որոնմամբ, այլ հինը ժխտելու ձևով։

Ֆ. Բուրլացկին խորհրդային երկրի ղեկավար Լ. Բրեժնևի քաղաքական դիմանկարի ուրվագծում բերում է այսպիսի մի փաստ, թե ինչպես մի անգամ, երբ Բրեժնևի մերձավորներից մեկը նրան ասում է, որ ցածր աշխատավարձ ստացողների համար ապրելը դժվարացել է, նա պատասխանել է, թե՝ «դու չգիտես կյանքը։ Ոչ ոք աշխատավարձով չի ապրում։ Հիշում եմ երիտասարդ տարիներին՝ տեխնիկումում սովորելու ժամանակ, կողմնակի փող էինք աշխատում՝ վագոններ բեռնաթափելով։ Եվ դա անում էինք երեք պարկը կամ արկղը այնտեղ, մեկն իր համար սկզբունքով։ Այդպես էլ բոլորն ապրում են երկրում»։ Նա ընդհանրապես մերժում էր որևէ ռեֆորմ։ Լսելով տնտեսական նորոգությունների անհրաժեշտության մասին 1965-ին սեպտեմբերյան պլենումում նախարարների խորհրդի նախագահ Ն. Կոսիգինի ելույթը, ասել է՝ «Այդ ինչ է նա հորինել։ Ռեֆորմ, ռեֆորմ…։ Ում է դա պետք և ով դա կհասկանա։ Լավ աշխատել է պետք, ահա և ամբողջ խնդիրը»[1]։

Կարելի է ժամանակի տնտեսական նորմերի վերաբերյալ վկայակոչումներ շատ կատարել, որոնք տասնամյակների ընթացքում ձևավորել են մարդկանց որոշակի պահվածք, հոգեբանություն, ավանդույթներ և սովորություններ, ինչը հեշտությամբ փոխել հնարավոր չէ։

Խորհրդային տնտեսագիտության հիմնական պոստուլատը, գրեթե այբբենական ճշմարտության ձևով, տեղին, թե անտեղի, ստույգ, թե սխալ, աշակերտական թե ակադեմիական մակարդակներով, եթե փորձ էր արվում ցույց տալու սոցիալիստական համակարգի առավելությունները կամ առանձնահատկությունները, ապա իբրև փաստարկ բերվում էր արտադրության միջոցների նկատմամբ հանրային սեփականության հանգամանքը։ Հարկ է խոստովանել, որ վերջինս այդպես էլ մնաց որպես այս կամ այն երևույթի գիտական բացատրության ամենաթույլ գործակիցը՝ չբացատրելով դրա բովանդակության արտահայտման ձևերն ու կաշկանդելով վերլուծական խորացումների հնարավորությունը, որպես «անքննելի»-ի իրավունք ստացած անձեռնմխելիության

[1] Литературная газета, 14 сентября, 1988г, №37. (Տնտեսական զարգացման պատմությունից հայտնի է, որ Տյուրգոյի, որպես ֆրանսիացի ֆինանսների գլխավոր վերահսկողի գործունեությունը նշանավորվեց մի շարք տնտեսական ռեֆորմների իրականացմամբ, որոնք ուղի էին հարթում տնտեսական ազատության համար։ Ռեֆորմատոր նախարարը ազատվում է պաշտոնից։ Սակայն, «Այնպիսի մի ժամանակ,- նկատում է Էդգար Ֆորը,- երբ միայն ամենավճռական ռեֆորմը կարող էր կանխել հեղափոխությունը, ռեֆորմի չհաջողված փորձն ընդունակ է միայն արագացնելու այն»։ (Эдгар Фор, Опала Тюрго, 12 «мая 1776, М., 1979», с. 427-428)։ Նույնը կատարվեց նաև խորհրդային համակարգի հետ՝ սկզբնավորելով հեղափոխական անցումը շուկայական տնտեսաձևին)։

խնդրի։ Ըստ էության միանշանակ էր սոցիալիստական մտքի վերաբերմունքը սեփականության, իսկ ավելի ստույգ մասնավոր սեփականության նկատմամբ*։

Երկրի ղեկավարն իր զեկուցումներից մեկում տեքստից հանում է Մարքսից բերված ցիտատը, ասելով, թե ինձնից տեսաբան մի սարքեք, ոչ ոք չի հավատա, որ ես կարդացել եմ Մարքսին[1]։ Իսկ տնտեսագիտական կոնցեպցիաներում տեղ գտած ճեղքվածքները շարունակում էին թափառել հանրային սեփականության «առավելության», թույլ գործակցի տարածություններում։

* *
*

Ես բնավ այն կարծիքին չեմ, թե խորհրդային համակարգում դրական ոչինչ չի եղել, դա այլ հարց է, իսկ սույն ուրվագիծը չի հավակնում ներկայացնելու խորհրդային տնտեսագիտական մտքի ճեղքվածքների համակարգված պատմությունը իր բոլոր դրսևորումների մեջ, այլ խնդրի ընդհանուր տիրույթում որպես որոշակի դիտակետերից որպես համակարգի փլուզումը պայմանավորող պատճառական հիմքերի դիտարկումներ։

Օգտագործված գրականություն

1. Անանուն Դավիթ, Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1800-1870), հ.2, Էջմիածին, 1922։
2. Սարինյան Սերգեյ, Հայ գաղափարաբանություն. պատմաքննական տեսություն, Եր. 1998, էջ 159։
3. Վարանդյան Միքայել, Հոսանքներ, ԺՆև, 1910։
4. История политической экономии социализма, М., 1972
5. Кричевский Никита, Наследие противоречий. Истоки русского экономического характера, М., 2016.
6. Конотопов М.В, Сметанин С.И., История экономики, М., 2000.
7. Литературная газета, 1988, №37.

---

* Ալեքսանդր Ցիպկոն նկատում է, որ Կ.Մարքսը միշտ չէ, որ հակված է եղել «եսասիրական մարդու» վերացմանը։ Վաղ շրջանի աշխատություններում Մարքսը շեշտում էր այն վտանգը, որ եթե ընչազուրկ (լյումպենը) մասնակից դառնա աշխարհի վերափոխությանը, ապա այն կարող է վերածվել ուրիշի հարստության թալանի՝ դրանով իսկ դատաստան տեսնելով այն գաղափարի հետ, որ մասնավոր սեփականության սկզբունքով բոլորը չեն կարող այն տնօրինել։ Եվ, եթե նույնիսկ պիտի վերացվի մասնավոր սեփականության հաստատությունը, ապա միայն էվոլյուցիայի մի այնպիսի փուլում և այնպիսի մարդկանց կողմից, որոնք ունեն հոգևոր բարձր զարգացածություն և արդեն «անցկացրել են հարստանալու տենչի հիվանդությունը» («Новый мир», 1990, №4)։ Մարքսի վաղ շրջանի դատողությունները, չե ստանում իրենց հետագա զարգացումը։ Կարճ ժամանակ անց նա կտրուկ շրջադարձ է կատարում իր ապագա հասարակության շինությունը կառուցելով այն թեզի վրա, որ ենթադրում էր վերջ տալ «մասնավոր սեփականության կեղտին»։ Այդպես է ընթացել հետհոկտեմբերյան տնտեսական ընթացքը սկսած 20-30-ական թվականների ազգայնացման, համայնացման և բռնագրավման «բարենորոգումներից մինչև 60-80-ական թվականների գործող համակարգի միջոցառումները»։

[1] Литературная газета, 21-27 декабря, 2016г, №50.

8. Литературная газета, 2016, №50.
9. Лихачев Д.С., Униварситетские встречи, 16 текстов, СПб, СПбГУП, 2006.
10. Маршал А. Принципы политической экономии, т. 1, М., 1983.
11. «Наш современник»: М., 1986, №7.
12. «Новый мир», 1990, №1.
13. «Новый мир», 1990, №3.
14. Политическая экономия, учебное пособие, М., 1988.
15. Симонд де Сисмонди Ж., Новое начала поли-тической экономии, т.1, М., 1937.
16. Студенский П, Доход нации. Теория измерение и анализ: прошлое и настоящее, М., 1968.
17. Фор Эдгар, Опала Тюрго, М., 1979.
18. Фридрих Лист, Национальная система политической экономии, СПб., 1891.
19. Шагинян Мариэтта: Иозеф Мыслевичек, М., 1988
20. ЭКО», 1989, №1.
21. Экономическая наука в современной Росии,1998, №1, 2.

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՃԵՂՔՎԱԾՔՆԵՐԸ

Ռոբերտ Ներսեսի Սարինյան

Համառոտագիր: Խորհրդային երկրի պատմության 20-ական թվականները դեռևս «գրականության ազատության» ժամանակաշրջանն էր, չկային արգելված հեղինակներ, հասարակական միտքն ազատ հնարավորություն ուներ շփվելու արևմտյան տնտեսագիտական մտքի ձեռքբերումներին: Ի հայտ եկան աշխատություններ, որոնք տնտեսագիտական միտքը դիմորոշեցին դեպի գիտական նորությունները: Սակայն, կարճ ժամանակ անց «Սովետական Ռուսաստանում սկսվում է տնտեսական գիտության անկումը»: Տնտեսագիտական միտքը կծկվում է, իր մեթոդաբանությամբ ենթակա մարքսիստական դոկտրինայի միագիծ ուղղվածությանը, հետազոտության առարկա դարձնելով հարցեր, կատեգորիաներ, երևույթներ՝ որոնցից արևմտյան միտքն արդեն հրաժարվել էր կամ համարում էր լուծված: Տնտեսագիտական միտքը անտեսում էր երևույթների վերլուծության այլ մեթոդների հետազոտական փորձը: Տնտեսական կատեգորիաները նույն բառապաշարի ու ձևակերպումների շրջանակներում «թվաբանական ճշտությամբ» տասնամյակներ շարունակ վերարտադրվում էր հասարակագիտական գրականության մեջ:

Ես բնավ այն կարծիքին չեմ, թե խորհրդային համակարգում դրական ոչինչ չի եղել, դա այլ հարց է: Իսկ սույն ուրվագիծը չի հավակնում ներկայացնելու խորհրդային տնտեսագիտական մտքի ճեղքվածքների համակարգված պատմությունը իր բոլոր դրսևորումների մեջ, այլ խնդրի ընդհանուր տիրույթում

որպես որոշակի դիտակետերից որպես այն պատճառական հիմքերի դիտարկումներ (կուսակցականացվածություն, տնտեսական դետերմինիզմի, արտադրողական և ոչ արտադրողական աշխատանքի, հոգևորի և տնտեսականի կապի, կենտրոնացված պլանավորման, արտադրության միջոցների հանրային սեփականության, ազգային տնտեսության, չստացված ռեֆորմների և այլն), որոնք պայմանավորեցին համակարգի փլուզումը:

Բանալի բառեր. մեթոդաբանության, կատեգորիա, կուսակցականացվածություն, արտադրողական և ոչ արտադրողական աշխատանք, հոգևորի և տնտեսականի կապ, կենտրոնացված պլանավորում, հանրային սեփականություն, չիրացված ռեֆորմներ:

ТРЕЩИНЫ В СОВЕТСКОЙ ЭКОНОМИЧЕСКОЙ МЫСЛИ

Роберт Нерсесович Саринян

Аннотация. 20-е годы в истории советской страны все еще были эрой «литературной свободы», в которой не было запрещенных авторов, общественная мысль имела возможность свободно общаться с прорывами западной экономической мысли. Появились труды, направившие экономическую мысль на к научным новшествам. Однако, спустя некоторое время, в «Советской России начинается падение экономической науки». Экономическая мысль сжимается отрешившись от анализа исследовательского опыта других методов. Единственным направлением стала марксистская доктрина. Предметом исследований стали вопросы, категории, от которых западная мысль уже отказалась или считала решенными.

Экономические категории в пределах одной и тех-же формулировок с «арифметической точностью» десятки лет воспроизводились в обществоведческой литературе.

Автор не придерживается мнения, что в советской системе не было ничего поучительного, это другой вопрос. И данный очерк не претендует на систематизированную историю трещин в советской экономической мысли во всех ее проявлениях, это лишь общее обозрение тех основных причин, обуславливающих распад ситемы (партийность, экономический детерминизм, производительный и непроизводительный труд, связь духовного и экономического, централизованное планирование, общественная собственность на средства производства, национальная экономика, нереализованные реформы и т. д.).

Ключевые слова. методология, категория, партийрость, организация, производительный и непроизводительный труд, связь духовного и экономического, централизованное планирование, общественная собственность, нереализованные реформы.

CRACKS OF SOVIET ECONOMIC THOUGHT

Robert Nerses Sarinyan

Abstract. The 20s of Soviet history were still the period of "freedom of literature" when no banned authors were, and the public mind had the opportunity to freely communicate the achievements of Western economic thought. There were works that turned economic thought towards scientific news. However, after a short time, "the decline of economic science in Soviet Russia begins".

The economic thought shrinked, subject to the unilinear direction of the Marxist doctrine by its methodology, making the questions, categories, and phenomena the object of research, which Western thought had already abandoned or considered resolved. Economic thought ignored the research experience of other methods of analyzing phenomena. Economic categories were reproduced in social science literature for decades with "arithmetical accuracy" within the framework of the same vocabulary and formulations.

I am not at all of the opinion that nothing positive happened in the Soviet system, that is a different matter. This sketch does not pretend to present a systematic history of the splits of the Soviet economic thought in all its manifestations, but in the general domain of the problem as observations from certain points of view as the causal foundations (partisanship, economic determinism, productive and non-productive work, the connection between the spiritual and the economic, centralized planning, production public ownership of funds, national economy, failed reforms, etc.), which caused the collapse of the system.

Keywords: methodology, category, party organization, productive and non-productive work, spiritual and economic connection, centralized planning, public ownership, unrealized reforms.